ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 հոկտեմբերի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

140
(2620)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 105

Օրեր առաջ՝ սեպտեմբերի 30-ին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Հանրային հեռուստաընկերության եթերում հայտարարեց. «Ես պատրաստ եմ նաեւ շատ ուղիղ ու բաց տեքստով ներկայացնել մեր ժողովրդին. ինչու դա չեմ անում՝ որովհետեւ դիվանագիտական կոռեկտությունն ու էթիկան թույլ չեն տալիս, որ բաց նստեմ ու բոլոր մանրամասները ներկայացնեմ: Նաեւ փորձագիտական հանրության բավականին լայն շրջանակին եմ տեղյակ պահում, մարդկանց լայն շրջանակ է տեղյակ դրանից»: Այսինքն՝ նա բաց տեքստով ասում է, որ ժողովրդի հետ չի խոսելու եւ ոչինչ չի ներկայացնելու. փորձագետներին ինչ պետք է, իրենց խողովակներով իմանում են: Իսկ ի՞նչ էր ասում Նիկոլ Փաշինյանը դեռեւս 2018 թվականի օգոստոսի 17-ին Հանրապետության հրապարակում: Նա հայտարարում էր. «Ղարաբաղի հարցի լուծողը ժողովուրդն է, եւ ես ուզում եմ ասել հետեւյալը. եթե բանակցային գործընթացի արդյունքում կլինի կարգավորման մի տարբերակ, որին ինքս կհավատամ եւ կհամարեմ, որ դա լավ տարբերակ է, որեւէ մեկը չմտածի, թե ես ձեզնից թաքուն որեւէ թուղթ կստորագրեմ կամ որեւէ գործողություն կանեմ: Երբ տեսնեմ, որ կա տարբերակ, որի շուրջ իսկապես կարելի է խոսել, ես կգամ եւ կկանգնեմ այստեղ, բոլոր մանրամասնություններով կներկայացնեմ ձեզ, եւ դուք կորոշեք՝ մենք գնում ենք այդ տարբերակով կարգավորման, թե չենք գնում: Կորոշեք, որ գնում ենք, ուրեմն կգնանք, կորոշեք, որ չենք գնում, ուրեմն չենք գնա: Դուք եք բարձրագույն իշխանությունը եւ որոշողը, եւ սրանում որեւէ կասկած չի կարող լինել»: Ստացվում է՝ չորս տարի առաջ Նիկոլ Փաշինյանը պատրաստ էր ժողովրդի առջեւ անկեղծ խոսել եւ ներկայացնել, իսկ հիմա խուսափում է: Իրականությունն այն է, որ նա հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ռուբեն Վարդանյանը Արցախում շուտով պետնախարար կնշանակվի: «Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մտադիր է նախ իրավաբանորեն լայն լիազորություններով օժտել պետնախարարի պաշտոնը՝հավասարեցնելով վարչապետի լիազորություններին, եւ երկրի ողջ կառավարումը հանձնել Մոսկվայից Արցախ մշտական բնակության տեղափոխված Ռուբեն Վարդանյանին: Այդպես նաեւ Ռուբեն Վարդանյանի քաղաքացիության հարցը կկարգավորվի, քանի որ այսօրվա դրությամբ չի կարող որեւէ ընտրովի պաշտոն զբաղեցնել Արցախում: Մեր խիստ հավաստի աղբյուրները փոխանցում են, որ Արայիկ Հարությունյանն իրականում մտադիր է Արցախի իշխանությունը փաթեթով հանձնել Վարդանյանին եւ հեռանալ, պարզապես այս ընթացքում պիտի Վարդանյանը կարողանա իրեն արդարացնել եւ ապացուցել, որ արժանի փոխարինող է: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները տեղեկացնում են նաեւ, որ Արցախի պետնախարար Արտակ Բեգլարյանը, որը բացառիկ պարկեշտ պաշտոնյաներից է, անգործ չի մնա. նրան Արցախի կառավարական կաբինետում բարձր եւ պատասխանատու պաշտոն կվստահվի: Մինչ այդ նրանք բոլորով պետք է օգնեն Վարդանյանին դիրքավորվել Արցախում եւ կառավարման ճկունություն հանդես բերել: Կարճ ասած, Ռուբեն Վարդանյանը փորձաշրջան է անցնում Արցախի Հանրապետությունում:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից վթարի ենթարկված Սոնա Մնացականյանի գործով քրեական վարույթով հարցաքննվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության աշխատակիցները, ոստիկանության ծառայողները, բոլոր ականատեսները, բացի Նիկոլ Փաշինյանից: Նա մինչ օրս չի հարցաքննվել: Դեռեւս 2020 թվականին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր ֆեյսբուքյան էջում հրապարակել էր. «Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ երկրի գործող ղեկավարը Քննչական կոմիտեի հրավերով ներկայացել է եւ քննիչի աշխատասենյակում պատասխանում է նրա հարցերին: Հ.Գ. Քաղաքական հետապնդման տարրերը ակնհայտ են:)»: Հետաքրքիր է՝ ինչու Նիկոլ Փաշինյանը այս դեպքով նույն խանդավառությունը չցուցաբերեց, ինչը անում էր նախկինում՝ ցույց տալու համար, թե ինքը անձեռնմխելի չէ: Միգուցե նա հասկացել է, որ այս դեպքով հարցաքննվելու դեպքում այլ հանգամանքներ ի հայտ կգան, որ իր դեմ կօգտագործվեն: Հիշեցնենք, որ ապրիլի 26-ին վարչապետի ավտոշարասյան կողմից Պարոնյան-Լեո փողոցների խաչմերուկում մահացու վրաերթի էր ենթարկվել Սոնա Մնացականյանը, որը հղի էր: Ավտոշարասյանն ուղեկցող որեւէ ավտոմեքենա չէր կանգնել, կնոջը չէր օգնել: Նրանք արագ սլացել ու հեռացել էին դեպքի վայրից:

ՀՀ ամենաերկար անուն ունեցող նախարարության՝ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի հարցերով նախարար Վահրամ Դումանյանի եւ փոխնախարար Ժաննա Անդրեասյանի հարաբերությունները շարունակում են լարված մնալ: Հատկապես վերջերս նրանց հարաբերություններն այն աստիճան են լարվել, որ Դումանյանը բացեիբաց ոչ միայն ցույց է տալիս իր վերաբերմունքը Անդրեասյանի նկատմամբ, այլ նաեւ նրան առնչվող աշխատանքները հանձնարարում է այլ աշխատակիցների՝ անտեսելով վերջինիս: ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Անդրեասյանն էլ իր հերթին նախարարին շատ հարցեր չի զեկուցում, այլ ուղիղ կառավարության հետ է աշխատում: Պատճառը, ըստ ArmLur.am-ի վստահելի աղբյուրների, այն է, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներսում ինչ-ինչ տրամադրություններ են փոխվել, ու չի բացառվում, որ Դումանյանին փոխարինի ոչ թե «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամ Մխիթար Հայրապետյանը, այլ հենց Ժաննա Անդրեասյանը: Ու թեեւ այս խոսակցությունները դեռ միս ու արյուն չեն դարձել, ամեն դեպքում, ԿԳՄՍ նախարարության ներսում մթնոլորտը խիստ լարված է: Հաճախ աշխատակիցները չգիտեն՝ նախարար-փոխնախարար լարվածության պայմաններում ինչպես դրսեւորել իրենց: Հանրային հեռուստաընկերության լրագրող Պետրոս Ղազարյանի տիկին Ժաննա Անդրեասյանը, ունենալով ամուր կապեր գործադիրում, խնդիր է դրել իր առջեւ ազատվել Դումանյանից, որին համարում է ոչ նորարար գաղափարների կրող: ArmLur.am-ը մեկնաբանություններ ստանալու համար կապ հաստատեց ԿԳՄՍ փոխնախարար Ժաննա Անդրեասյանի հետ, որը հակիրճ ասաց. «Ձեր տեղեկությունները ոչ մի ձեւ իրականությանը չեն համապատասխանում, եւ ավելացնելու որեւէ բան չունեմ»: Նախարար Դումանյանն էլ իր հերթին չցանկացավ որեւէ կերպ մեկնաբանել թեման:

ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1919-1920 ԹԹ.-Ի ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ

1919-1920 թվականների Ադրբեջանի քարտեզներից մեկով այդ տարածքի մաս են կազմել նաեւ Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց ձորի մարզերն ամբողջությամբ, Արարատի մարզը մասնակի եւ անգամ Երեւանից մի հատված: Այդ մասին ArmLur.am-ի հետ զրույցում նշեց քարտեզագիր Շահեն Շահինյանը:



Ինչպես հայտնի է, երեկ Նիկոլ Փաշինյանին պատկանող լրատվամիջոցը հրապարակել է, թե Ադրբեջանը Հայաստանից ինչ 5 հիմնական պահանջ ունի: Դրանք հետեւյալն են՝

1. ԼՂ պաշտպանության բանակի լուծարում,
2. ԼՂ ճանաչում Ադրբեջանի կազմում, առանց որեւէ՝ նույնիսկ ինքնավար կարգավիճակի, այսինքն՝ 0 կարգավիճակով,
3. միջանցք՝ Հայաստանի տարածքով,
4. սահմանագծման եւ սահմանազատման գործընթաց 1919, 1920 թվականի քարտեզներով (առայժմ հայտնի չէ, թե կոնկրետ որ քարտեզների մասին է խոսքը),
5. անհետ կորած ադրբեջանցիների ճակատագրի պարզաբանում (հնարավոր է հետագայում Հայաստանին պատերազմական հանցագործությունների մեջ մեղադրելու միտումով):

-Երեկ «Հայկական ժամանակ» օրաթերթում հրապարակվեց 5 կետ, որից մեկը ներառում էր 1919-ից 1920թթ.-ի քարտեզը: Այդ քարտեզի մասին ի՞նչ կարող եք ասել: Այդ ժամանակ Հայաստանը ի՞նչ սահմաններ է ունեցել:

-Երբ խոսում ենք 1919-20 թթ.-ի քարտեզների մասին, առաջինը այն է, որ չպետք է դատողություններ անենք, քանի դեռ այդ քարտեզները հրապարակված չեն: Պետք չի ենթադրություններ անել, թե որ սահմանի մասին է խոսքը: Հաշվի առնելով ադրբեջանական կողմի նկրտումները՝ շատ մեծ հավանականությամբ խոսքը գնում է Արեւելյանի Դեմոկրատական Հանրապետության՝ այսպես կոչված 1-ին հանրապետության ժամանակ ստեղծված քարտեզի մասին, որը ստեղծվել է հենց այդ նույն հանրապետության շրջանակներում, սակայն չի եղել ճանաչված ոչ մի միջազգային կառույցի կողմից եւ չունի ոչ մի իրավական հիմք: Այդ քարտեզը չի ընդհունվել 1-ին հանրապետության կողմից եւ անգամ չի էլ քննարկվել: Այդ քարտեզը միջազգային տեսակետից ոչ մի իրավական հիմք չունի բնականաբար, սակայն Ադրբեջանը, հանդես գալով ուժի դիրքերում, ցանկանում է պարտադրել եւ նմանատիպ մի քարտեզով լուծման գնալ:

-Տարբեր տեղեկություններ են շրջանառվում, թե այդ թվականի քարտեզներից բացակայում են Սյունիքը, Վայոց ձորը, Գեղարքունիքի մի հատվածը: Ձեր մատնանշած քարտեզում այդպե՞ս է իրավիճակը:

-Պետք է նշեմ, որ այդ քարտեզը դեռ հրապարակված չի, սակայն ադրբեջանական կայքերում տարածված են քարտեզներ, որտեղ Հայաստանի որոշակի մարզեր՝ ամբողջությամբ, որոշ մարզեր մասնակի պատկանում են Ադրբեջանի Հանրապետությանը: Ըստ այդ քարտեզների՝ Հայաստանը պետք է լիներ 11-ից 12- հազար քմ., շրջափակված լիներ ադրբեջանական տարածքներով, եւ, իհարկե, հետագայում ցանկանում է կլանել նաեւ այդ տարածքները: Այդ քարտեզի բուն էությունը Հայաստանի ոչնչացումն է: Եթե նույն սկզբունքով ընդունենք, ապա եթե Ադրբեջանը բանակցություններին ներկայացնի այդ քարտեզը, ապա մենք կարող ենք ներկայացնել արեւմտահայերի 2-րդ կոնգրեսի քարտեզը կամ, ասենք, մ.թ.ա. եղած Հայաստան պետության քարտեզը: Այդ քարտեզները, որոնք մենք ներկայացնում ենք, որոնք գոյություն ունեցող պետությունների կողմից ընդունված չեն եւ հիմք չեն հանդիսացել ոչ մի պետության կողմից, ապա այդ քարտեզները ոչ մի իրավական ուժ չունեն:

Զրուցեց ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՍՊԱՍԵԼԻ ԷՐ

ՀՐԱԺԱՐՎԵՑ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՆԴԱՏԻՑ

Մեղրիի նախկին քաղաքապետ Մխիթար Զաքարյանը երեկ պատգամավորական մանդատից հրաժարվելու դիմում է ներկայացրել: Նա չի լինելու այլեւս «Հայաստան» խմբակցության անդամ: Իհարկե, որոշումը սպասելի էր, բայց ամեն ինչի մասին՝ հերթով:

Չնայած Մխիթար Զաքարյանի անցած պայքարի կարճ ճանապարհին, անցած լուրջ դժվարություններին՝ պետք է նկատել, որ նրա քաղաքական գործունեությունը խիստ անհասկանալի էր: Մեծ շուքով Սյունիքի մարզի մի քանի համայնքների ղեկավարներով ներգրավվեցին քաղաքական գործընթացում, բանտարկվեցին այդ հանդգնության համար, պատգամավորական մանդատ ստացան…, բայց Զաքարյանը բանտից դուրս գալուց հետո երկու անգամ ներողություն խնդրեց Նիկոլ Փաշինյանից նրան վիրավորելու համար: 2 անգամ հանդիպեց Ալեն Սիմոնյանին եւ հիմա էլ դուրս եկավ խորհրդարանից: Այն, որ Զաքարյանը գրել է, թե շարունակելու է իր գործունեությունը «Վերածնվող Հայաստան» կուսակցությունում, իհարկե, չափազանցություն է, քանի որ, ArmLur.am-ի տեղեկություններով, երկար ժամանակ է՝ նա ընդհանրապես կուսակցության հետ չի շփվում, կուսակցության ղեկավար Վահե Հակոբյանի հետ առաջվա ջերմությունը չկա: Զաքարյանն իրականում այդ նախադասությունը գրել է, որպեսզի հնարավոր հարվածներից հեռու մնա: Հասկանալի է, որ երկու ներողություններից հետո Զաքարյանը որոշել է հարաբերությունները կարգավորել Նիկոլ Փաշինյանի թիմի հետ եւ հանգիստ ապրել, ինչպես արեց Քաջարանի նախկին քաղաքապետ Մանվել Փարամազյանը՝ Նիկոլ Փաշինյանի կնոջը ծաղիկներ նվիրելով եւ կրկին համայնքի ղեկավար վերընտրվելով: Հավելենք, որ առաջիկայում չի բացառվում՝ Սիսիանի նախկին քաղաքապետ Արթուր Սարգսյանն էլ նույն ճանապարհով գնա եւ հեռանա «վերածնվողներից»՝ ապագան այլկերպ կառուցելով:

Հ. Գ. Երկար ժամանակ է ArmLur.am-ը փորձում է այս առիթով մեկնաբանություններ ստանալ Մխիթար Զաքարյանից, սակայն նա կտրականապես հրաժարվում է հեռախոսազանգերին, հաղորդագրություններին պատասխանել:

ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն՝ ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը հարցաքննության է հրավիրել ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանին: Վերջինիս հարցաքննության են հրավիրել քուրդ ազատամարտիկների՝ Թուրքիայում հայտնվելու դեպքով տարվող քրեական գործով: Անձամբ Գեղամ Մանուկյանից փորձեցինք պարզել տեղեկությունը, սակայն նա չցանկացավ մանրամասներ ներկայացնել՝ միայն հաստատելով, որ հրավիրվել է հարցաքննության: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ԱԱԾ-ում քրդերի՝ Թուրքիայում հայտնվելու առեղծվածային դեպքով քրեական գործ է հարուցվել, եւ բավականին խիստ է դրվել հարցը. պարզել, թե ինչպես են երկու քուրդ ազատամարտիկներ՝ Աթիլլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդրըմին Թուրքիայում հայտնվել: Նշենք, որ Աթիլլա Չիչեքին եւ Հուսեյին Յըլդրըմին Հայաստանում 2021 թվականի օգոստոսի 16-ին անցել էին Արաքս գետն ու ապօրինի հատել ՀՀ պահպանվող պետական սահմանը: Այդ արարքի համար ՀՀ վերաքննիչ դատարանը 5 տարի ժամկետով ազատազրկման էր դատապարտել նրանց, որը պայմանականորեն չէր կիրառվել՝ սահմանելով փորձաշրջան՝ 3 տարի ժամկետով: Քուրդ ազատամարտիկներն ազատ էին արձակվել հենց դատական նիստերի դահլիճից: Այսինքն՝ նրանք եղել են ազատության մեջ 7 ամիս, որից հետո անհասկանալի հանգամանքներում հայտնվել են Թուրքիայում: Այդ մասին ահազանգել էր ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը:

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հայտնի են եվրոպական նապաստակի որսի ժամկետները: ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն առաջարկում է եվրոպական նապաստակի որսի ժամկետները սահմանել այս տարվա նոյեմբերի 4-ից մինչեւ դեկտեմբերի 18-ը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ համապատասխան կենսամիջավայրում իրականացված հաշվառումների ընթացքում գրանցվել է եվրոպական նապաստակի՝ տարբեր գոտիներում թվաքանակի խիստ անհավասար բաշխվածություն: Բացի այս, պարզվում է, որ Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերում հնարավոր է որսալ վայրի խոզի եւս 15 առանձնյակ:

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ՏԱՎՈՒՇՈՒՄ

Ինչպես հայտնել ենք, հոկտեմբերի 3-ին՝ ժամը 21:30-ի սահմաններում, Ադրբեջանի ԶՈ ստորաբաժանումները ականանետերի եւ խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակների կիրառմամբ կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի արեւելյան հատվածում տեղակայված հայկական մարտական դիրքերի ուղղությամբ: Այս առնչությամբ ArmLur.am-ը զրուցել է Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանի հետ՝ պարզելու համար, թե ինչ իրավիճակ է Տավուշի սահմանային համայնքներում: «Մեզ մոտ ամեն ինչ նորմալ է, մարդիկ ապրում են իրենց բնականոն կյանքով, եւ ոչ մի խուճապային տրամադրություն չկա»,-նշեց մեր զրուցակիցը:

ԵՌԱԲԼՈՒՐԻ ՄԻՋԱԴԵՊՈՎ

ՀՀ անկախության տոնի օրը Եռաբլուրում զոհված զինծառայողների՝ ոստիկանության կողմից ուժի կիրառմամբ բերման ենթարկված ծնողների միջադեպով հարուցվել է քրեական վարույթ, որը քննվում է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ վարչությունում: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինն այս օրերին ակտիվ կերպով հարցաքննության է հրավիրում ոստիկանության կարմիր եւ սեւ բերետավորներին, ինչպես նաեւ գրեթե ամեն օր հարցաքննվում են զոհված զինծառայողների ծնողները: Այս պահին քրեական վարույթով 6 ծնող տուժող է ճանաչվել: Ավելին, ArmLur.am-ին քրեական վարույթից ուշագրավ հանգամանքներ են հայտնի դարձել, թե ծնողները ինչ են պատմել իրավապահներին: Հարցաքննված ծնողները կոնկրետ մեկ բան են նշել, որ ոստիկանները իրենց որեւէ պահանջ չեն ներկայացրել եւ անհամաչափ ուժ են կիրառել: Տուժած ծնողները դատաբժշկական փորձաքննության են ենթարկվել, բայց փորձաքննության պատասխանը դեռեւս չկա: Հիշեցնենք, որ սեպտեմբերի 21-ի վաղ առավոտյան, երբ ծնողները Եռաբլուրում էին եւ փորձում էին թույլ չտալ Փաշինյանի մուտքը, ոստիկանությունը, բիրտ ուժ կիրառելով ու մարմնական վնասվածքներ հասցնելով, նրանց հեռացրեց տարածքից: Այս դեպքով նաեւ ոստիկանության Ներքին անվտանգության ծառայությունում է կատարվում ծառայողական քննություն: Հավելենք, որ միջադեպից հետո մի շարք հասարակական կազմակերպություններ եւ զոհված զինծառայողների ծնողներ պահանջեցին ՀՀ ոստիկանապետ Վահե Ղազարյանի հրաժարականը:

ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ

ՀՀ ազգային ժողովը քննարկեց Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանումների աշխատակիցների հավելավճարի հնարավորությունը: Նախագծով առաջարկվում է յուրաքանչյուր տարվա աշխատանքային ստաժի դիմաց հաշվարկել 2 տոկոս հավելավճար: Առաջարկվում է այս փոփոխությունն ուժի մեջ դնել 2024 թվականի հուլիսի 1-ից: Հատուկ քննչական ծառայության լուծարման շրջանակներում նախկին աշխատակիցները տեղափոխվել են ոչ միայն Հակակոռուպցիոն կոմիտե, այլ նաեւ դատախազություն կամ քննչական այլ մարմիններ: Եվ խնդիր էր առաջանում այն տեսանկյունից, որ նրանց աշխատանքային ստաժը չէր դիտարկվում հավելավճարի կոնտեքստում, ըստ այդմ՝ առաջարկվում է այս սոցիալական երաշխիքը եւս վերականգնել այդ աշխատակիցների համար, որոնք տեղափոխված կլինեն դատախազություն կամ Քննչական մարմին: Երրորդ փոփոխությունը վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի վարձատրությանը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակվել է շատ ավելի շուտ, քան ուժի մեջ է մտնել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքը: Ըստ այդմ՝ առաջարկվում է հետադարձության կանոնի ուժով սահմանել, որ կոմիտեի նախագահի վարձատրության կտորները շատ ավելի շուտ են ուժի մեջ մտնում, եւ պաշտոնի նշանակման պահից մինչեւ օրենքի՝ ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում եւս վարձատրությունը համապատասխան կերպով հաշվարկվում է եւ վճարվում է կոմիտեի նախագահին:

ՓԱՍՏԵՐ

ՀՀ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐԱՑՈՒՄ

Այսօր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող լրատվամիջոցը հերթական հոդվածն է հրապարակել, այս անգամ՝ «Ի՞նչ է ուզում Ռուսաստանը. ի գիտություն Վեհափառ հայրապետի, երեք նախագահների եւ փորձագիտական հանրության» վերտառությամբ:

«Ռուսաստանը Հայաստանից համարյա ուզում է այն, ինչ ուզում է Ուկրաինայից, որ այն դառնա «Ռուսաստան-Բելառուս» միութենական պետության կամ Ռուսաստանի մաս: Ու եթե Ուկրաինայի դեպքում նման արդյունքի համար ՌԴ-ն օգտագործում է ռուսական եւ գուցե բելառուսական զորքերը, Հայաստանի դեպքում օգտագործում է Ադրբեջանի եւ որոշ չափով էլ ՀՀ-ում տեղակայված ռուսական զորքերը:

Գործողությունների իմաստը հետեւյալն է՝ ցույց տալ Հայաստանի անվտանգային խոցելիությունը, որպեսզի վերջինս որպես առաջ դիմի «Ռուսաստան-Բելառուս» միութենական պետության մաս դառնալու համար: Այս տրամաբանությունը զարգացնելու քայլերը Ադրբեջանի ագրեսիվությունն է, ՀՀ-ում տեղակայված ռուսական զորքի իներտությունը, Ռուսաստանի քաղաքական իներտությունը եւ Հայաստանին զենքի մատակարարման պարտավորությունները չկատարելը: Վերջին գործիքի կիրառումը պատահական չէ եւ օգտագործվել է նաեւ նախկինում, զորօրինակ՝ 2016-ի պատերազմից առաջ եւ հետո: Հայաստանը պետք է հնարավորինս խոցելի լինի, որ հնարավորինս պինդ գրկի Ռուսաստանին… Ուկրաինայում գործերի ոչ այնքան հաջող ընթացքը ըստ էության ավելի է սրել 2011-ից հետո հաստատված այն վիճակը, որ Ռուսաստանը դժվարանում է հիմա արդեն 2020 թվականից հետո հաստատված ստատուս քվոյի երաշխավորը լինել. Խծաբերդն ու Փառուխը դրա վառ վկայությունն են: Թուրքիայի եւ Ադրբեջանի դերը ավելի է մեծացել, եւ հիմա Ադրբեջանը կարող է դառնալ ՌԴ-ից ԵՄ գազի եւ նավթի արտահանման հարթակ»,- նշվում է հոդվածում:

Առհասարակ, վերջին շրջանում ՀՀ իշխանությունների քայլերի հաջորդականությունը հուշում է այն մասին, որ նպատակ է առկա ավելի խորացնել ՀՀ-ԱՄՆ հարաբերությունները:

Այդ տրամաբանությունն է առկա, երբ ուսումնասիրում եք ՀՀ պաշտոնյաների գործուղումների դինամիկան: Մասնավորապես, սեպտեմբեր ամսվա ընթացքում ՀՀ պաշտոնյաները հենց ակտիվ են եղել ԱՄՆ մեկնելու առումով, եւ փոխադարձ այցեր եւս եղել են: Մասնավորապես, խոսքը ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանի, Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի եւ, իհարկե, վարչապետ Նիկոլ Փաշինյանի մասին է:

Արմեն Գրիգորյանը, օրինակ, ԱՄՆ-ում է եղել սեպտեմբերի 21-ից սեպտեմբերի 29-ը եւ մի քանի հանդիպումներ ունեցել, այդ թվում՝ ԱՀ նախագահի օգնական Հիքմեթ Հաջիեւի հետ: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ կողմերը քննարկել են ԼՂ հիմնախնդրի երկարաժամկետ խաղաղ կարգավորման գործընթացը, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության հաստատման անհրաժեշտությունը:

Կարեւորվել է վերջին ագրեսիայի հետեւանքների վերացումը:

Պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը եւս ԱՄՆ-ում է եղել եւ հանդիպումներ ունեցել: Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ ԱՄՆ-ում նա այցելել է Կանզաս նահանգում գործող Սալինայի ուսումնական կենտրոն եւ հանդիպել Կանզասի ադյուտանտ գեներալ, Ազգային գվարդիայի հրամանատար, գեներալ-մայոր Դեյվիդ Վեյշարի հետ, նաեւ հանդիպել Կանզասի նահանգապետ Լորա Քելլիի հետ:

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն էլ Նիկոլ Փաշինյանի հետ էր մեկնել ԱՄՆ եւ հանդիպել ՄԱԿ գլխավոր քարտուղարի տեղակալին, Իրանի նախարարին եւ այլք: Սա եւս մեկ ապացույց, որ ՀՀ-ն խորացնում է հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Սեպտեմբերի 20-ին էլ Հայաստան էր այցելել Ամերիկայի Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների տան խոսնակ Նենսի Փելոսի գլխավորած պատվիրակությունը:

Միայն սեպտեմբեր ամսվա փոխայցերը վկայում են, որ երկուստեք հետաքրքրություններ են առկա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՏԵՍԱՆՅՈՒԹԻՆ

Կանադայի արտաքին գործերի նախարար Մելանի Ջոլին անդրադարձել է ադրբեջանցի զինծառայողների կողմից հայ ռազմագերիներին գնդակահարելու տեսանյութին: Ջոլին «Թվիթեր»-ի իր միկրոբլոգում գրել է, որ ադրբեջանցի զինծառայողների կողմից հայ ռազմագերիներին մահապատժի ենթարկելու մասին հաղորդումները խորապես մտահոգիչ են:

«Նման բռնության մեղավորները պետք է պատասխանատվության ենթարկվեն, իսկ տարածաշրջանը պետք է վերադառնա կայուն իրավիճակի»,- գրել է Ջոլին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ՀԵՏ

Ամենայն հայոց կաթողիկոսը գնահատում է ՀՀ եւ ԼՂՀ նախագահների պատրաստակամությունը՝ հայտնի հանդիպման ձեւաչափով արծարծելու երկրի առջեւ ծառացած մարտահրավերները եւ դրանց հաղթահարման հնարավոր ուղիները: Այս մասին հայտնել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Եսայի քահանա Արթենյանը՝ պարզաբանելով երեկ ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի հայտարարությունն այն մասին, թե իշխանությունների եւ ընդդիմության միջեւ Վեհափառ հայրապետի նախաձեռնած հարթակի անհրաժեշտությունը կարելի է սպառված համարել: Տ. Եսային տեղեկացրել է, որ Վեհափառ հայրապետը առանձին քննարկումներ կունենա նախագահների հետ, որոնց արդյունքում կիստակեցվի այս ձեւաչափով հանդիպումների շարունակությունը:

ԱՆՎԱՆԵԼ Է ՀԻՄԱՐՈՒԹՅՈՒՆ

Պեսկովը հիմարություն է անվանել հայկական պարբերականների հրապարակումներն այն մասին, թե Մոսկվան, իբր, ձգտում է հասնել նրան, որ Երեւանը անդամակցի Ռուսաստանի եւ Բելառուսի միութենական պետությանը:

«Ոչ, սա հերթական հիմարությունն է»,- ասել է Պեսկովը լրագրողների հետ զրույցում:

ԼՈՒՐՋ ԽՆԴԻՐ

ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԹՄՐԱՎԱՃԱՌՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ համացանցի միջոցով թմրանյութերի անօրինական վաճառքը լուրջ խնդիր է դարձել աշխարհի բոլոր երկրների իրավապահների համար, եւ Հայաստանն այս առումով բացառություն չէ: Արդեն երկար ժամանակ «Տելեգրամ» հավելված ասելիս առաջին միտքն այն էր, թե խոսքը թմրավաճառության մասին է, եւ իրավապահների մտահոգությունը միայն «Տելեգրամը» չէ:

Ամիսներ առաջ Քրեական ոստիկանության ԹԱԾԴՊ վարչության կազմում ստեղծվեց համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պաքարի բաժինը, որը համալրվեց ոչ միայն օպերատիվ աշխատանքի փորձ ունեցող, այլեւ տեղեկատվական տեխնոլոգիաների գծով մասնագետ աշխատակիցներով, եւ արդյունքը երկար սպասել չտվեց: Օրերս բաժնի ծառայողների բազմակողմանի միջոցառումների արդյունքում բացահայտվեց հանցավոր խմբի կազմակերպած ապօրինի թմրաշրջանառության մի ողջ սխեմա: Համագործակցելով Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների հետ՝ սեպտեմբերի 20-ին Արամի փողոցում ձերբակալեցին հանցախմբի անդամներից մեկին եւ ներկայացրին վարույթն իրականացնող մարմին, որտեղ նա անհերքելի ապացույցների ճնշման տակ խոստովանական ցուցմունք տվեց: Հետագա օպերատիվ միջոցառումների եւ քննչական գործողությունների ընթացքում ձերբակալվածը Երեւանի տարբեր վայրերից իրավապահներին ներկայացրեց Մարիխուանայով լցված 6 փաթեթ, որոնք ինքը տեղադրել էր թաքստոցներում:

Ձերբակալվածը մայրաքաղաքի Կարախանյան փողոցում բնակվող 22-ամյա երիտասարդ էր: Ի դեպ, համացանցային նմանատիպ հանցավոր սխեմաներ հիմնականում օգտագործում են նորագույն տեխնոլոգիաների տիրապետող անձինք: Այս դեպքում էլ ստեղծվել էր բավական լուրջ մեխանիզմ՝ նաեւ վերահսկողական ֆունկցիաներով: Բացել էին տելեգրամյան ալիք, որի միջոցով վերահսկում էին ալիքի շրջանակներում գործող էջերը: Օրինակ, եթե էջի կամ, այսպես ասած, «շոփի» օգտատերը թերանում էր թմրանյութի մատակարարման հարցում, կազմակերպվում էր օնլայն քննարկում, եւ օգտատերը, իր էջով հանդերձ, կարող էր արգելափակվել կամ վերացվել: Մեծ տեղ էր հատկացված նաեւ գաղտնիության ապահովմանը: Տելեգրամյան ալիքը կառավարում էր նաեւ համացանցի միջոցով իրացվող թմրանյութի դիմաց ստացած գումարը կոնկրետ վաճառողին փոխանցելու մեխանիզմը, ընդ որում՝ այն իրականացվում էր կրիպտոարժույթով: Սա էլ արվում էր ֆինանսական գաղտնիությունը պահելու նպատակով: Այս ամենը, սակայն, մեր իրավապահների համար բացահայտման խոչընդոտ չէր: Սեպտեմբերի 29-ի գիշերը սկսած միջոցառումն իրավապահները շարունակեցին: Համագործակցելով Կենտրոնական բաժնի քրեական հետախույզների հետ՝ մայրաքաղաքի Կարախանյան փողոցում հայտնաբերեցին եւ ձերբակալեցին հանցավոր խմբի եւս մեկ անդամի, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվեց Մարիխուանայի զանգվածով չորս փաթեթ: Ձերբակալված 30-ամյա երիտասարդը նույնպես խոստովանեց, որ օգտագործելով տելեգրամյան էջերը՝ զբաղվել է թմրամիջոցների իրացմամբ:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, երկուսն էլ կալանավորվել են:

Իսկ Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության նորաստեղծ՝ համացանցի միջոցով թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պաքարի բաժնի ծառայողները շարունակում են պայքարը չարիքի դեմ:

ԼՈՒՐԵՐ

ՎԹԱՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից վթարի ենթարկված Սոնա Մնացականյանի գործով հարցաքննության են հրավիրվել եւ ցուցմունք են տվել Նիկոլ Փաշինյանի անվտանգության աշխատակիցները: Ասել է թե՝հարցաքննվել են Ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության ծառայողները, որոնք այդ օրը եղել են Նիկոլ Փաշինյանին ուղեկցող մեքենաների մեջ:

Հիշեցնենք, որ ՀՀ քննչական կոմիտեն առաջիկայում որոշում կկայացնի վարչապետի ավտոշարասյան կողմից վրաերթի ենթարկված Սոնա Մնացականյանի մահվան դեպքով:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝Քննչական կոմիտեի կողմից կրկնակի դատաավտոտեխնիկական-դատատեսաձայնագրային փորձաքննության եզրակացությունը ստացվել է, եւ շուտով նախաքննությունը կավարտվի, վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, կուղարկվեն դատարան:

Հիշեցնենք, որ ապրիլի 26-ին վարչապետի ավտոշարասյան կողմից Պարոնյան-Լեո փողոցների խաչմերուկում մահացու վրաերթի ենթարկվել Սոնա Մնացականյանը: Վերջինիս ընտանիքի անդամներն ու փաստաբան Ռաֆֆի Ասլանյանը պնդում են, որ մի շարք ապացույցներ «ոստիկանության համապատասխան ստորաբաժանման կողմից քննիչին չեն տրամադրվել»:

Ավելին, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյան կողմից Սոնա Մնացականյանին մահվան ելքով վթարի ենթարկելու դեպքն այնքան է անհանգստացրել միջազգային կառույցներին, որ նրանք կտրուկ քայլերի են գնացել: Մասնավորապես, մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Գերմանիայի Բունդեսթագի բազմաթիվ պատգամավորներ վթարի հետեւանքով մահացած Սոնա Մնացականյանի դեպքով դիմել են ՀՀ կառավարությանը եւ Ազգային ժողովին: Ըստ ամենայնի, նրանք կոնկրետ հարցեր են ուղղել ՀՀ Ազգային ժողովին, թե ինչպես է ստացվել, որ գործով մեղադրյալը կալանքի տակ չէ:

Հավելենք, որ Նիկոլ Փաշինյանի ավտոշարասյանն ուղեկցող ՃՈ ավտոմեքենան վրաերթի է ենթարկել հղի կնոջը ու հեռացնել դեպքի վայրից: Քննչական կոմիտեն, սակայն, ի սկզբանե ՃՈ մայորին մեղադրանք է առաջադրել միայն ՀՀ ՔՕ 242-րդ հոդվածի 2-րդ մասով, իսկ դեպքի վայրը լքելու հոդվածով՝ոչ:

Հետագայում գործի նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը ցուցում է տվել լրացնել մեղադրանքը՝ մեղադրանք առաջադրելով նաեւ ՀՀ ՔՕ 244-րդ հոդվածի 1-ին մասով, եւ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու միջնորդություն հարուցել: Արամ Նավասարդյանի մեղադրանքը լրացվել է, սակայն նա ազատության մեջ է:

ԻՆՔՆԱՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Հանրապետության հրապարակից 46-ամյա կնոջ են տարել ոստիկանության Կենտրոնի բաժին: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝պարզվել է, որ կինը Երեւանի բնակիչ է եւ ցանկացել է ինքնասպանություն գործել՝կամրջից ցած նետվելով:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԴԵՌԵՎՄ ՓՆՏՐՈՒՄ ԵՆ

ArmLur.am-ի հավաստի տեղեկությունների համաձայն՝ քրեական հեղինակություն Արթուր Ղազարյանի՝ քանաքեռցի Տույի գործով մաս կա անջատված, որով ՀՀ քննչական կոմիտեում քննությունը շարունակվում է: Ասել է թե՝ քրեական հեղինակության սպանությունից անցել է գրեթե մեկ տարի, եւ իրավապահները դեռեւս փնտրում են մեկ անձի, որն այդ օրը եղել է Արտյուշ Սիմոնյանի տանը եւ նրա մտերիմներից է:

Նշենք, որ ՀՀ քննչական կոմիտեն նախաքննության ավարտ է հայտարարել քրեական հեղինակություն Արթուր Ղազարյանի՝ քանաքեռցի Տույի, Աժ նախկին պատգամավոր Արտուշ Սիմոնյանի եւ եւս երկու անձանց սպանության դեպքով: Եվ, ահա, քրեական գործը դատարանում է եւ այն մակագրվել է Երեւան քաղաքի դատավոր Մանվել Շահվերդյանին:

Հիշեցնենք, որ 2021 թվականի նոյեմբերի 11-ին՝ ժամը 02:36-ի սահմաններում, Երեւան քաղաքի Քանաքեռ 16-րդ փողոցի 16 Ա տան բակում կրակոցներ էին հնչել, սպանվել էր Արթուր Ղազարյանը, Արայիկ Խաչատրյանը, Արթուր Բորյանը եւ Աժ նախկին պատգամավոր Արտյուշ Սիմոնյանը: Այս գործով մեղադրյալի աթոռին են հայտնվել նախկին պատգամավորի մյուս երկու որդիները եւ նրանց տանը գտնվող բարեկամներից մեկը՝ Արսեն Ալեքսանյանը. մյուս որդին ազատության մեջ է: Մեկ անձ հետախուզման մեջ է:

ՊԱՅԹՅՈՒՆԻՑ 2 ԱՄԻՍ ԱՆՑ

«Սուրմալու» առեւտրի կենտրոնի ողբերգական պայթյունից անցել է մոտ 2 ամիս, եւ մինչ օրս քրեական վարույթով մեղադրյալի աթոռին են հայտնվել 4 անձ: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինը պատրաստվում է առաջիկայում հարցաքննության հրավիրել «Սուրմալու» առեւտրի կենտրոնի սեփականատեր Ռազմիկ Զախարյանին:

Հիշեցնենք, որ «Սուրմալու» առեւտրի կենտրոնում տեղի ունեցած պայթյունի գործով ձերբակալվածներից մեկը առեւտրի կենտրոնի փոխտնօրենն է, մյուսը՝պայթած տարածքի վարձակալը, իսկ մյուս երկու ձերբակալվածները պահեստը շահագործողներն են եղել, սակայն ավելի ուշ փոխտնօրենը ազատ արձակվեց:

«Սուրմալու»-ի փոխտնօրենին ու վարձակալներից մեկին մեղադրանք է առաջադրվել հրդեհային անվտանգության կանոնները խախտելու համար, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ կամ այլ ծանր հետեւանք: Մյուս երկու անձինք մեղադրվում են անզգուշությամբ երկու կամ ավելի անձանց կյանքից զրկելու համար:

16 մարդու կյանք խլած դեպքից ավելի քան 2 ամիս անց քրեական գործում դեռեւս կարգավիճակ չունի «Սուրմալու»-ի սեփականատերը:

Ողբերգական դեպքից 24 օր անց հարցաքննվել է 110 քաղաքացի, 85 անձ ճանաչվել է տուժող:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 3-ից 4-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 52 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՈՒՄ

2021թ. փետրվարի 26-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով Դիլիջան խոշորացված համայնքի ղեկավար նշանակված, ՔՊ կուսակցության Դիլիջանի տարածքային կառույցի ղեկավար Դավիթ Սարգսյանը շարունակում է Դիլիջան քաղաքի հողերը մեծ թափով, շուկայականից ցածր գներով օտարել, այդ թվում՝ Երեւանի բնակիչների: Նախկինում փաստերով գրել եմ Դիլիջանի հողերը մայրաքաղաքի բնակիչներին վաճառելու մասին: Դիլիջան քաղաքում բնակավայրերի հողերի քառակուսի մետրի շուկայական նվազագույն գինը 10 հազար դրամ է, իսկ քաղաքի հողերը էժան գներով օտարելու հետեւանքով Դիլիջան համայնքի բյուջե չեն մտնում միլիոնավոր դրամներ: Դիլիջանի բնակիչները հայտնում են, որ վաղն իրենց տղաները տնամերձ հող չեն ունենալու, որ տուն կառուցեն, որովհետեւ համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը հողերը թափով ծախում է: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է, որ Դիլիջանի համայնքի ղեկավարի 2022թ. հուլիսի 29-ի թիվ 536-Ա որոշմամբ 2022թ. օգոստոսի 30-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 765.0քմ հողամաս Դիլիջան քաղաքի Վասիլեւի փողոցի թիվ 46/9 հասցեում արտադրական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 5355000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 5355000 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւանի Դավիթաշեն 3-րդ թաղ. շ. 24 բն. 9 հասցեի բնակիչ Նունե Աղասինի Էլիզբարյանը, որի մասին հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 10 արձանագրությունը:

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2022թ. հուլիսի 29-ի թիվ 536-Ա որոշմամբ 2022թ. օգոստոսի 30-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 835.9քմ հողամաս Դիլիջան քաղաքի Վասիլեւի փողոցի 128/3 հասցեում բնակելի տան կառուցման նպատակով, 5851300 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 6143865 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւանի Սասնա ծռեր փողոցի շ. 2 բն. 221 հասցեի բնակիչ Լեւոն Սարգսյանը, որի մասին հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 6 արձանագրությունը: Դիլիջանի համայնքի ղեկավարի 2022թ. հուլիսի 29-ի թիվ 536-Ա որոշմամբ 2022թ. օգոստոսի 30-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 148.0քմ հողամաս Դիլիջան քաղաքի Թբիլիսյան խճուղի թիվ 4/4 հասցեում հասարակական նշանակության օբյեկտի կառուցման նպատակով, 1036000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 1139600 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւանի Արտաշատի խճուղի թիվ 90 հասցեի բնակիչ Արշակ Սարգսի Սարգսյանը, որի մասին հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 9 արձանագրությունը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՑԱՆՑ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ազգային ժողովին է ներկայացվել կառավարության հեղինակած «Հաշտարարության մասին» օրենքում եւ հարակից օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ փաթեթը, որը միտված է հաշտարարության ինստիտուտի կայացմանն ու զարգացմանը, ինչպես նաեւ դատարանների ծանրաբեռնվածության թեթեւացմանը:

Նախագծով սահմանվել են հաշտարարության առցանց իրականացման հնարավորություն, հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության մարմինների ձեւավորման կարգ եւ լիազորությունների վերաբերյալ հստակ իրավակարգավորումներ, հաշտարարությունը խթանող գործիքակազմեր, հաշտարարին կարգապահական պատասխանատվության ենթարկման հիմքերը, առիթները, կարգը եւ մի շարք այլ հարցեր:

Մշակվել է ոլորտի բարեփոխմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթ, որով նախատեսվում են հետեւյալ հիմնական կարգավորումները.

-որոշ ընտանեկան գործերով նախքան դատարան դիմելը սահմանվել է պարտադիր հաշտարարություն իրականացնելու պայման: Մասնավորապես՝առաջարկվել է ամուսնալուծության, երեխայի բնակության վայրի որոշման, ալիմենտի (ապրուստավճար) բռնագանձման, ամուսինների ընդհանուր սեփականությունը համարվող գույքի բաժանման, ծնողական իրավունքների իրականացման, երեխայի մերձավոր ազգականների՝ երեխայի հետ շփվելու արգելքները վերացնելու, երեխայի տեսակցության կարգ սահմանելու, ամուսնական պայմանագրի փոփոխման կամ լուծման վերաբերյալ գործերով մինչեւ դատարան դիմելը նախատեսել պարտադիր հաշտարարության պահանջ: Նշված վեճերով կողմերը կկարողանան դատարան դիմել միայն այս արտադատական կարգը պահպանելուց հետո: Օրենքի նախագծով առաջարկվել են նաեւ նշված կանոնի գործողության որոշ բացառություններ, օրինակ՝ եթե հնարավոր չլինի հաշտարար նշանակել, ապա կողմը կկարողանա առանց արգելքի դիմել դատարան: Պարտադիր հաշտարարության ինստիտուտի սահմանման առումով կարեւոր է նշել, որ կողմերը չեն զրկվում դատական պաշտպանության իրավունքից եւ հնարավորություն ունեն դիմել դատարան վեճի լուծման արտադատական կարգի իրացումից հետո: Կարեւոր է միայն մասնակցել հաշտարարի հետ առաջին հանդիպմանը, եւ եթե կողմը հրաժարվի հաշտարարությունից, նա կարող է, ամեն դեպքում, դրանից հետո դիմել դատարան: Նման մոտեցումը համահունչ է ինչպես ներպետական սահմանադրական, այնպես էլ կոնվենցիոն իրավակարգավորումներին եւ ՄԻԵԴ դատական պրակտիկային:

-Սահմանվել է առցանց հաշտարարության իրականացման հնարավորություն՝ տեսաձայնային հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ:

-Սահմանվել է հաշտարարի թեկնածուի ընտրության եւ նշանակման էլեկտրոնային կարգ:

-Սահմանվել են նաեւ հաշտարարների որակավորման գործընթացի կատարելագործմանն ուղղված իրավակարգավորումներ: Հստակ սահմանվել են հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության կառավարման մարմինները, վերջիններիս լիազորությունները:

-Նախատեսվել են հաշտարարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առիթները, հիմքերը, կարգապահական վարույթի առանձնահատկությունները:

Հարկ է նշել, որ նախագծով առաջարկվում են նաեւ մի շարք այլ կարգավորումներ՝ կապված հաշտարարական գաղտնիքի պահպանման, կողմերի հետ փոխկապակցվածության բացահայտման, դատարանի կողմից հաշտարարության նշանակման վերաբերյալ:

Նախագծերի ընդունումից հետո՝ առավելագույնը մեկ տարվա ընթացքում, Արդարադատության նախարարությունը ձեռնամուխ է լինելու գործող հաշտարարների վերապատրաստման եւ նոր հաշտարարների ներգրավման ու որակավորման գործընթացին: Այս գործընթացին փորձելու ենք ներգրավել նաեւ միջազգային գործընկերներին՝ հաշտարարների ուսուցումն ու որակավորումը միջազգային չափանիշներին համապատասխան իրականացնելու համար: Բացի այդ, կմշակվի հաշտարարության էլեկտրոնային հարթակը, որի միջոցով կիրականացվի հաշտարարների հաշվառումը, ընտրությունը եւ նշանակումը: Իսկ օրենքի ընդունումից հետո մեկ տարի անց արդեն կսկսի գործել ընտանեկան գործերով պարտադիր հաշտարարության ինստիտուտը:

ԱՌԿԱ Է

ՔԱՆԴՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ

ՀՀ բաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը Ազգային ժողովին ներկայացրեց ««Քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծը, որի նպատակն է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդիրների կանոնակարգման պետական բաղաքականությունը սահմանելու մասով ՀՀ կառավարության համար լիազորող նորմերի սահմանումը: Ազգային ժողովի նիստի ժամանակ Ղուլարյանը նշեց, որ հեխմորհրդային տարիներին բնակֆոնդի անվտանգ շահագործման ուղղությամբ համակարգված լայնածավալ աշխատանքներ չեն իրականացվել:

Բազմաբնակարան շենքերի սեփականատերերի կողմից եւս պարտադիր նորմերը չեն կատարվել անհրաժեշտ ծավալով եւ որակով: Խնդիրների լուծումն ավելի շուտ կրել է իրավիճակային բնույթ: Դրա հետեւանքով զգալիորեն մեծացել է բնակֆոնդի մաշվածությունը: Մասնավորապես՝ մարզերից եւ Երեւան քաղաքից հավաքագրված տվյալների համաձայն՝ հանրապետությունում առկա է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (3-րդ եւ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) ավելի քան 600 բազմաբնակարան շենք: Այսինքն՝ առկա տվյալների համաձայն՝ անբավարար տեխնիկական վիճակում է գտնվում հանրապետության մոտ 19 հազար բազմաբնակարան շենքերի 3,2 տոկոսը: հանրապետության բնակավայրերում առկա է նաեւ քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող ավելի քան 1200 անհատական բնակելի տուն (որից մոտ 1000-ը՝ բնական աղետների հետեւանքով):

Հայեցակարգի հիմնական նպատակն անբավարար տեխնիկական վիճակում գտնվող բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման համար 2021-2023 թվականների ընթացքում իրավական հիմքերի ստեղծումն է հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրում ներառված իրավական ակտերի մշակման միջոցով, հիմնախնդրի կանոնակարգման համար լուծումների առաջադրումը, պետական քաղաքականության հիմնական մոտեցումների հստակեցումը եւ այդ մոտեցումների արդյունավետությունը, հասցեականությունը, առաջնահերթությունների ապահովումը:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է անբավարար տեխնիկական վիճակում գտնվող (ուժեղացման եւ վերակառուցման՝ 3-րդ աստիճանի վնասվածություն ունեցող եւ քանդման ենթակա վթարային՝ 4-րդ աստիճանի վնասվածություն ունեցող) բնակֆոնդի հիմնախնդրի կանոնակարգման նպատակով սահմանել լիազորող նորմեր կառավարության համար:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 13 ճՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԻՃԱԿԱԽԱՂԻ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Team Telecom Armenia-ն հայտարարում է ամենասիրված «Շեյք» գովազդային վիճակախաղի նոր պայմանների մասին, որին այս տարի կարող են մասնակցել բոլորը՝ անկախ նրանից՝ Team-ի բաժանորդ են, թե բջջային կապի այլ օպերատորի:

Խաղարկությանը մասնակցելու համար պետք է ներբեռնել My Team հավելվածը, այնուհետեւ օրը մեկ անգամ թափահարել՝ շեյքել հեռախոսը մինչեւ 5 վայրկյան ու ստանալ Iphone 13 Pro ու Saշsung Galaxy A13 սմարթֆոններ, էլեկտրական ինքնագնացներ, ականջակալներ եւ գլխավոր նվերը՝ Volkswagen ID.4 էլեկտրական մեքենան շահելու հնարավորություն:

«Մեզ համար կարեւոր էր այս բացառիկ խաղարկությանը մասնակցելու հնարավորություն տալ բոլորին, այդ պատճառով էլ որոշեցինք ընդգրկել նաեւ հայաստանյան մյուս օպերատորների բաժանորդներին: Այս տարվա «Շեյքը» ամենամեծն է թե՛ մրցանակային ֆոնդի, թե՛ մասնակիցների հնարավոր թվի առումով»,- նշեց Team Telecom Armenia-ի կոմերցիոն տնօրեն Կարեն Շաբոյանը: Շեյքը տեւելու է մինչեւ դեկտեմբերի 31-ը:

Հայտարարություն (3)

Գայանե Անաստասի Սարգսյանի աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. հոկտեմբերի 21-ին, ժամը 11:30-ին Գայանե Անաստասի Սարգսյանի սնանկության գործով կառավարիչ Արմենակ Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Գայանե Սարգսյանի պարտավորություններ համար <<ՎՏԲ-Հայաստան բանկ>> ՓԲԸ-ում գրավադրված սեփականության իրավունքով Անաստաս Սարգսյանին պատկանող `

Լոտ-1. ՀՀ քաղաք Երեւան Մալաթիա Ս.Օհանովի փողոց 12 շենք 26 հասցեում գտվող անշարժ գույքի աճուրդային վաճառքը:

Անշարժ գույքը գտնվում է 9 հարկանի շենքի 9-րդ հարկում, բնակարանի մակերես 55.6 քմ է, առաստաղի բարձրությունը 2.8 մետր, պատուհանները մետաղապլաստ են, հատակը մանրատախտակ, ունի ջրամատակարարում, գազամատակակարում, էլեկտրամատակարարում:

Աճուրդի մեկնարկային գինը սահմանվում է 15 155 910 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը.

աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը կազմում է 151 560 ՀՀ դրամ

Նախավճարը կազմում է տվյալ լոտի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են Գայանե Սարգսյանի սնանկության հատուկ հաշվին՝ <<Արդշինբանկ>> ՓԲԸ-ի <<Էրեբունի>> մասնաճյուղ 2472302882650130 հաշվեհամարին մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ը կարող են հայտ ներկայացնել Սնանկության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Ցանկացողները կարող են լոտը ուսումնասիրել, ինչպես նաեւ աճուրդի կանոնակարգին ծանոթանալ դիմելով կառավարիչ Արմենակ Էլոյանին /հեռ.094 411 487/:

ԱՌԱՋՆԱՀԵՐԹ

ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՆԱԽԱԳԻԾ

ԱԺ-ում քննարկվել է ակադեմիական հիմքով տարկետում տալու նախագիծը. ԲՏՃՄ ուղղությունները կլինեն առաջնահերթ:

««Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն ԱԺ նիստում ներկայացրել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանը՝ նշելով, որ օրենսդրական փոփոխության առաջարկն անցել է հանրային քննարկումների տեւական փուլ, դրական եզրակացություն է ստացել ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովում:

Առաջարկվող փոփոխությամբ ՀՀ կառավարությանը կտրվի լիազորություն՝ սահմանելու բուհերի եւ մասնագիտությունների ցանկ, ըստ որի՝ սովորողները կստանան ակադեմիական տարկետում բարձրագույն կրթության բոլոր երեք աստիճաններում՝ բակալավրիատում, մագիստրատուրայում եւ ասպիրանտուրայում:

«Սա առաջին հերթին վերաբերում է բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ ու գերակա ոլորտներին:

Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու կարգը եւ պայմանները, ինչպես նաեւ բուհերի ու բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական եւ մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով համապատասխան մասնագիտությունների ցանկը սահմանելու է ՀՀ կառավարությունը՝ հաշվի առնելով պետության գերակայությունները»,- նշել է Վահրամ Դումանյանը:

Առաջարկվող երկրորդ փոփոխությունն առնչվում է ակադեմիական հիմքով տարկետման առավելագույն տարիքային շեմին: Ըստ այդմ՝ Հայաստանում ուսումնառության համար զինծառայությունից տարկետում կտրվի մինչեւ 28 տարեկանը՝ ներկայում գործող 27 տարեկանի փոխարեն:

«Այժմ զորակոչի տարիքը մինչեւ 27 տարեկանն է, սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ նշանակալի նվաճումների համար տարկետում ստացած սովորողներն ասպիրանտուրայի երկրորդ կուրսում արդեն իսկ զորակոչվում են բանակ՝ օրենքի պահանջի համաձայն: Այս խնդիրն առաջացել է հանրակրթության տեւողության փոփոխության պատճառով: Հանրակրթության տեւողությունը նախկինում 10 տարի էր, այժմ դարձել է 12 տարի, ինչով պայմանավորված՝ կրթության ցիկլի տեւողությունը երկարաձգվել է, մինչդեռ 27 տարվա շեմը մնացել է անփոփոխ: Նախագծով առաջարկում ենք ուսումնական հիմքով զորակոչից տարկետման իրավունքի տարիքային շեմը մեկ տարով ավելացնել եւ սահմանել 28 տարեկանը, որով կլուծվի խնդիրը»,- ասել է նախարարը:

ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը ներկայացրել է ԱԺ պատգամավոր, նշված հանձնաժողովի անդամ Վիլեն Գաբրիելյանը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Գ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

(աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին)

2022թ. հոկտեմբերի 04-ին, ժամը 12:30-ին նշանակված ԱՁ Հարություն Արշակի Հարությունյանի սնանկության գործով աճուրդը չի կայացել հայտ չլինելու պատճառով.

2022թ. հոկտեմբերի 25-ին, ժամը 12:30 ՀՀ, Ք.Երեւան, Արշակունյաց պող. 5; 311 սենյակ հասցեում նշանակված է ԱՁ Հարություն Արշակի Հարությունյանի սնանկության գործով վերջինիս սեփականության իրավունքով պատկանող գույքի վաճառքը հրապարակային սակարկությունների եղանակով մեկ լոտով.

ԼՈՏ 1. - ԱՁ Հարություն Արշակի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույք՝ ատամնաբուժական համասարք՝ 2 /Երկու/ հատ, ավտոկլավ՝ 2 /Երկու/ հատ, ախտահանիչ սարք/սուխոժար՝ 1 /Մեկ/ հատ, գլոսպերենային ստերիլիզացնող սարք՝ 1 /Մեկ/ հատ, ջրի թորման սարք՝ 1 /Մեկ/ հատ, պոլիմերիզացիոն սարք՝ 2 /Երկու/ հատ, գերձայնային սկեյլեր՝ 1/ Մեկ/ հատ:

ԱՁ Հարություն Արշակի Հարությունյանիին սեփականության իրավունքով պատկանող շարժական գույքը գտնվում է ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանոձոր, Բաղրամյան պողոտա 74/2 հասցեյում: Հիմնականում 2007-2008թ. Չինաստանի արտադրության ատամնաբուժական սարքավորումներ են: Բոլոր սարքավորումները օգտագործված են, ունեն որոշակի մաշվածություն:

Գույքի աշխատանքային վիճակի հետ կապված փորձարկումներ հնարավոր չի եղել իրականացնել, իրականացվել է գույքի արտաքին ուսումնասիրություն, համաձայն որի գույքը գտնվում է նորմալ աշխատանքային վիճակում, բացառությամբ մեկ ատամնաբուժական համասարքի, որը ոչ աշխատանքային վիճակում է: Գույքի մեկնարկային գինը կազմում է՝ 880,000 (Ութ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Գույքը հանդիսանում է ԱՁ Հարություն Արշակի Հարությունյանիինի սեփականությունը: Գույքի ապամոնտաժման, տեղափոխման, առուվաճառքի նոտարական վավերացման եւ պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարվելու է գնորդի միջոցներով եւ հաշվին:

Աճուրդին մասնակցել ցանկացողները, ոչ ուշ, քան աճուրդի անցկացման օրվանից հինգ օր առաջ, կարող են հայտ ներկայացնել ՀՀ Սնանկության դատարան՝ ք. Երեւան, Օտյան 53/2 հասցեով: Հայտին կցվում է ֆիզիկական անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենները: Հայտին կցվում են նաեւ նախավճարի, աճուրդի մասնակցության վճարի վճարումը հաստատող անդորրագրերը: Նախավճարը կազմում է տվյալ լոտի մեկնարկային գնի 5 տոկոսը, իսկ աճուրդի մասնակցության վճարը՝ տվյալ լոտի մեկնարկային գնի 1 տոկոսը:

Աճուրդի մասնակից չհամարվող անձինք, բացառությամբ ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչների, աճուրդին ներկա գտնվելու համար վճարում են մուտքի վճար՝ 5.000 ՀՀ դրամ:

Նախավճարը, աճուրդի մասնակցության վճարը եւ մուտքի վճարը վճարվում է պարտապանի անվամբ բացված սնանկության հատուկ հաշվեհամարին՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 220531023806000:

Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարգություններով վաճառելու կարգը սահմանված է ՀՀ Արդարադատության նախարարի 16 մարտի 2020թ N 116-Ն հրամանով:

Աճուրդի դրված գույքն ուսումնասիրելու համար ցանկացողները կարող են զանգահարել սնանկության գործով կառավարչին 077-64-22-00 հեռախոսահամարով՝ մինչեւ աճուրդի անցկացման օրվան նախորդող 5-րդ օրը:

Կառավարիչ՝ Է. Սերոբյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Ես՝ Նարա Էդիկի Յարալյանս, կորցրել եմ ԵՊՀ-ի դիպլոմս՝ ТВ-1 N: 067190, որը ստացել եմ 1992թ.-ին: Համարել անվավեր:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԿՅԱՆՔ ՈՒ ԿՌԻՎ»

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Շարմ Հոլդինգ» ընկերությունն իր ֆեյսբուքյան էջում անդրադարձել է «Կյանք ու կռիվ» եւ «Կյանք ու կռիվ. 25 տարի անց» ֆիլմերի ցուցադրել-չցուցադրելուն առնչվող հարցին:

«Վերջին օրերին սոցիալական ցանցերում բազմապիսի քննարկումների թեմա է դարձել «Կյանք ու կռիվ» եւ «Կյանք ու կռիվ. 25 տարի անց» ֆիլմերի ցուցադրել-չցուցադրելուն առնչվող հարցը: Ֆիլմերի իրավատերը հանդիսացող «Շարմ Հոլդինգ» ընկերությունը հայտնում է, որ երբեւէ չի խոչընդոտել ֆիլմի ցուցադրմանը որեւէ հեռուստաալիքով եւ ներկայումս նույնպես պատրաստ է ցուցադրման արտոնագիր տրամադրելու ցանկացած հեռուստաընկերության, որը կդիմի նման ցանկությամբ:

Ցանկանում ենք նշել, որ հայ մարդու համար հայրենասիրության ու ոգու արիության հիանալի օրինակ դարձած «Կյանք ու կռիվ» եւ «Կյանք ու կռիվ. 25 տարի անց» ֆիլմերում լավագույնս պատկերված պայքարի հաստատակամությունը հանուն հայրենիքի չափազանց անհրաժեշտ է մեր երկրի համար վճռորոշ այս ժամանակաշրջանում, այդ իսկ պատճառով ֆիլմերը լայն հանրության համար հասանելի են Kinodaran հավելվածում կամ kinodaran.com կայքում», - գրված է ընկերության ֆեյսբուքյան էջում:

ArmLur.am-ը հիշեցնում է, որ Հանրային հեռուստաընկերությունը հաղորդագրություն էր տարածել, որում մանրամասնել էր, թե ինչու չի ցուցադրում «Կյանք ու կռիվ» ֆիլմը:

«Հանրային հեռուստաընկերությունը, արձագանքելով «Կյանք ու կռիվ» ֆիլմի վերաբերյալ հարցումներին, թե ինչու, ֆիլմի հեղինակային իրավունքներն ունենալով հանդերձ, այն չի ցուցադրում, հայտնում է՝ թեեւ ֆիլմը նկարահանվել է Հանրային հեռուստաընկերության պատվերով եւ միջոցներով, եւ, ըստ տրամաբանության, հեղինակային իրավունքները պետք է պատկանեին Հանրայինին, փաստացի տնօրինվում են այլ ընկերության կողմից: Միեւնույն ժամանակ հայտնում ենք, որ Հանրային հեռուստաընկերությունն արդեն իրավական գործընթաց է սկսել՝ պարզելու ֆիլմի հեղինակային իրավունքներն այլ իրավատիրոջ փոխանցելու հանգամանքները, վերականգնելու իր իրավունքները, ինչպես նաեւ գնահատելու եւ փոխհատուցելու ընկերությանը հասցված վնասը: Հանրայինն այս խնդրի առնչությամբ դիմում է պատրաստվում ուղղել ՀՀ պետական վերահսկողական ծառայություն», - ասվում էր հայտարարության մեջ:

Ֆիլմի ռեժիսորը իր հերթին անդրադարձել էր ստեղծված իրավիճակին՝ գրելով. ««Կյանք ու կռիվ» ֆիլմի ստեղծագործական արժեքը (եթե ունի) դժվար վնասվի որեւէ մեկի կողմից:

Եթե հաղթանակած հայկական բանակի մասին ֆիլմը չցուցադրելու պատճառը ոչ թե քաղաքական է, այլ նրանում է, որ չունեք դրա իրավունքը, իրավունք ունեցողին գտնելը փոքր Հայաստանում, կարծում եմ, դժվար չի լինի: Այսօր 2022-ի սեպտեմբերի 30-նն է»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՄԱՐՏԻ 1

«ԳԱՐՈՒՆ Ա» ՖԻԼՄԸ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԳՐԱՆՑԵԼ

Արցախյան քառօրյա պատերազմի մասին պատմող «Գարուն ա» գեղարվեստական ֆիլմը շարունակում է հաջողություններ գրանցել միջազգային կինոփառատոններում: Այս մասին ArmLur.am-ը տեղեկանում է «Գարուն ա» ֆիլմի ինստագրամյան պաշտոնական էջից:

Ֆիլմը «Ֆոկուս» միջազգային կինոփառատոնի մրցույթային փուլում անցել է կիսաեզրափակիչ փուլ, միեւնույն ժամանակ «Ֆալկոն» միջազգային կինոփառատոնում արժանացել է մրցանակի:

Հիշեցնենք, որ ֆիլմը էկրաններ էր բարձրացել 2022 թվականի մարտի 1-ին՝ գարնան առաջին օրը: Այն ֆիլմ է՝ պատերազմի, սիրո, մեր օրերի նվիրյալների, միասնության, պետական մտածողության կերտման ու հայրենասիրության մասին՝ երեք սերունդների աչքերով:

Ֆիլմի գլխավոր պրոդյուսերն Ալեքսանդր Խաչատրյանն է, պրոդյուսերը՝ Դիանա Ավետիսյանը: Սցենարը հեղինակել է Հարություն Ղուկասյանը, օպերատորն է Սուրեն Թադեւոսյանը, իսկ կոպոզիտորը՝ Արման Էլբերտը, մոնտաժը՝ Միքայել Թորգոմյանի, նկարիչ՝ Տիգրան Ասատուրով:

Դերերում՝ Ալեքսանդր Խաչատրյան, Լեւոն Հախվերդյան, Արմեն Մարգարյան, Մարջան Ավետիսյան, Եվա Ջոհրաբյան, Շանթ Հովհանիսյան, Ալիս Կապլանջյան, Վահագն Մարտիրոսյան, Սաթենիկ Հազարյան, Նարինե Պետրոսյան, Թումաջ Դանեշ Բեհզադի եւ այլք:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

4-ՐԴ ՏՈՒՐԻ ՊԱՐՏԻԱՆԵՐ

Երեւանում ընթացող ChessMood երկրորդ միջազգային մրցաշարում կայացել են 4-րդ տուրի պարտիաները:

Հայաստանի ներկայացուցիչներից հաղթանակ են տոնել Տիգրան Պետրոսյանը, Մանուէլ Պետրոսյանը, Արման Փաշիկյանը, Էրիկ Չաքրյանը եւ այլք:

4-րդ տուրից հետո մրցաշարային աղյուսակի միանձնյա առաջատարը մինչ այս բացարձակ արդյունք գրանցած Տիգրան Պետրոսյանն է, որը 4 հնարավորից հավաքել է 4 միավոր: 3,5-ական միավոր ունեն Հայկ Երիցյանը, Մանուէլ Պետրոսյանը, Իրանից Ամիրռեզա Բալան, Շանթ Սարգսյանը, ՖԻԴԵ-ի դրոշի ներքո հանդես եկող ռուս Ալեքսեյ Գոգանովը եւ Իրանից Մոհամեդ Ալիզադեհը:

ChessMood երկրորդ միջազգային մրցաշարի A ենթախմբին այս տարի մասնակցում է 84 շախմատիստ Իրանից, Ֆրանսիայից, Վրաստանից, Հնդկաստանից, Ուկրաինայից, Ռուսաստանից եւ ԱՄՆ-ից:

Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով եւ բաղկացած է 9 տուրից:

ՈՒԵՖԱ-Ի ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պորտուգալիայի Սեյշալ քաղաքում հոկտեմբերի 5-ին տեղի կունենա ՈւԵՖԱ-ի երիտասարդական լիգայի խմբային փուլի H խմբի «Բենֆիկա» (Պորտուգալիա) - «Պարի Սեն-Ժերմեն» (Ֆրանսիա) հանդիպումը:

Հանդիպման մրցավար է նշանակվել Հենրիկ Նալբանդյանը, մրցավարի օգնականներն են Մեսրոպ Ղազարյանն ու Ատոմ Սեւգուլյանը. հաղորդում է ՀՖՖ-ի կայքը:

Նույն օրը լեհական Լյուբին քաղաքում տեղի կունենա ՈւԵՖԱ-ի երիտասարդական լիգայի Չեմպիոնների ուղու առաջին փուլի «Զագլեմբե Լյուբին» (Լեհաստան) - «Ռուխ Լվով» (Ուկրաինա) հանդիպումը:

Հանդիպման մրցավարն է Աշոտ Ղալթախչյանը, մրցավարի օգնականները՝ Սարգիս Հովհաննիսյանը եւ Գեւորգ Շախկալդյանը:

ՊԱՅՔԱՐ՝ ԵԶՐԱՓԱԿԻՉՆԵՐՈՒՄ

Իտալիայում ավարտին մոտեցող բռնցքամարտի Եվրոպայի ավագ տարիքի պատանիների առաջնությունում Հայաստանի 3 մարզիկ եզրափակիչներում պայքարում է ոսկե մեդալների համար:

Եզրափակիչի ուղեգրեր են նվաճել 46 կգ քաշային Վաղարշակ Քեյանը, 52 կգ քաշային Էրիկ Առստամյանն ու 70 կգ քաշային Երանոս Օհանյանը:

Կիսաեզրափակիչում Վաղարշակ Քեյանը հաղթել էր բուլղարացի Ալեքսանդր Պապովին, Էրիկ Առստամյանը՝ իռլանդացի Ջոն Հարթին, Երանոս Օհանյանը՝ Իտալիան ներկայացնող Գաբրիել Մորալին:

● Հոկտեմբերի 5-ին Դիլիջանի քաղաքային զբոսայգում տեղի կունենա «Մենք աստղեր ենք» միջոցառումը: Տոմսերի արժեքը՝ 2500 դրամ: Սկիզբը՝ ժամը 13:00-ին, 16:00-ին, 18:15-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն են մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնի հիմնական գործառույթները:

Ռաիսա Մակարյան (25 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնագիտական կողմնորոշման եւ կարողությունների զարգացման կենտրոնն իր կանոնադրական գործառույթների շրջանակում իրականացնում է.

-հանրակրթության համակարգում, մասնագիտական ուսումնական հաստատություններում ուսումնառողների, կրթության համակարգից դուրս մասնագիտության, աշխատանքի եւ զբաղմունքի հարցերում հստակ կողմնորոշում չունեցող, վերամասնագիտացման եւ վերաորակավորման, աշխատաշուկայի արագ փոփոխվող պայմաններին հարմարվելու կարիք ունեցող անձանց՝ տարիքային առանձնահատկություններով տարբերակված մասնագիտական կողմնորոշման մեթոդաբանության մշակում,

-նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական, բարձրագույն ուսումնական հաստատությունների, համալիր սոցիալական ծառայությունների եւ զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններում, սոցիալական այլ ծառայություններ իրականացնող կառույցներում մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի խորհրդատվության համակարգի ներդրման մոդելների եւ մեթոդաբանության մշակում եւ աջակցություն,

-մասնագիտական ուսումնական հաստատություններում կարիերայի կենտրոններին մեթոդաբանական եւ խորհրդատվական աջակցության ցուցաբերում,

-մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի ծառայություններ իրականացնող մասնագետների վերապատրաստման ծրագրերի մշակում, նրանց կարողությունների շարունակական գնահատում եւ զարգացում, վերապատրաստված մասնագետների կողմից անցկացվող աշխատանքների մշտադիտարկում, մասնագիտական եւ մեթոդական աջակցություն եւ խորհրդատվություն (սուպերվիզիա):

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». ՀՀ զբաղմունքների միասնական դասակարգչի, մասնագիտական կրթական չափորոշիչների եւ այլ նորմատիվ իրավական ակտերի հենքի վրա մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի կառավարման վերաբերյալ հանրամատչելի նյութերի մշակում եւ տարածում, ՀՀ մասնագիտական կողմնորոշման եւ կարիերայի քաղաքականության, ռազմավարության, իրականացման ձեւերի ու մեթոդների բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է աշխատող կանանց տրամադրվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդ:

Լիլիթ Մինասյան (19 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Աշխատող կանանց տրամադրվում է հղիության եւ ծննդաբերության արձակուրդ՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության), 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության, 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում: Այդ արձակուրդը հաշվարկվում է միասին եւ կնոջը տրամադրվում է ամբողջությամբ: Ժամանակից շուտ ծննդաբերելու դեպքում հղիության արձակուրդի չօգտագործված օրերը գումարվում են ծննդաբերության արձակուրդի օրերին:

Նորածին որդեգրած կամ նորածնի խնամակալ նշանակված աշխատողին տրամադրվում է արձակուրդ որդեգրելու կամ խնամակալ նշանակվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին որդեգրելու կամ երկու եւ ավելի նորածնի խնամակալ նշանակվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

Փոխնակ մոր միջոցով երեխա ունեցած աշխատողին (երեխայի կենսաբանական մորը) տրամադրվում է արձակուրդ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական (երկու եւ ավելի նորածին երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ նորածինների 110 օրական) դառնալը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Երեխային փաստացի խնամող ընտանիքի մոր (խորթ մոր), հոր (խորթ հոր) կամ խնամակալի ցանկությամբ տրամադրվում է երեխայի խնամքի արձակուրդ մինչեւ երեխայի երեք տարեկան դառնալը: Արձակուրդը վերցվում է ամբողջությամբ կամ մաս առ մաս: Նման իրավունք ունեցող աշխատողն այն կարող է ստանալ հերթականությամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը արվել է Երեւանում

Դավիթ Անհաղթ փողոցի թիվ 10 շենքի մոտ բախվել են 48-ամյա Անդրանիկ Մկրտչյանի վարած Hyundai Sonata մակնիշի եւ 24-ամյա Գեւորգ Բադալյանի վարած մոպեդը: Բախման հետեւանքով մոպեդը կողաշրջվել է, իսկ մոպեդավարը տեղափոխվել է թիվ 1 համալսարանական հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.10.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: